



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
(Հայարտոնագիր)

ԱՊՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

No 1 (3)

Патентное управление Республики Армения
(Армпатент)

ПРОМЫШЛЕННАЯ
СОБСТВЕННОСТЬ

Официальный бюллетень

Հրատարակվում է 1995 թվականից

Սույն տեղեկագրում զետեղված տեղեկությունները համարվում են հրապարակված 1997 թվականի օգոստոսի 8-ից

Երեւան 1997

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ.....	5
Արտոնագրերի զիջման մասին պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման կարգը	7
Ապրանքային նշանների զիջման մասին պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման կարգը	12
ԳՅՈՒՏԵՐ.....	17, 115
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին.....	19, 117
Տեղեկություններ գյուտերի նախկին ԽՍՀՄ պաշտպանական փաստաթղթերի հիման վրա տրված արտոնագրերի մասին.....	44, 139
ՕԳՏԱԿԱՐ ՍԱՐՔԵՐ.....	45, 141
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին.....	47, 143
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՍՈՒՇՆԵՐ.....	49, 145
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին.....	51, 147
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	57
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին	59
ՑՈՒՑԻՉՆԵՐ.....	105
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	111, 151
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ	155
ԵՐԿՏԱՌ ԿՈՂԵՐԸ	158

Հրատարակվում է Հայարտոնագրի կողմից

Թողարկման պատասխանատու Անդրանիկ ԽԱԶԻԿՅԱՆ
Գեղարվեստական եւ տեխնիկական խմբագիր Մանվել ԲԱԲԱՅԱՆ
Խմբագիրներ Գոհար ԱԴԱՄՅԱՆ
Սարատ ՃՈՒՂՈՒԻՐՅԱՆ
Գեղարվեստական մշակում եւ կոմպյուտերային էջատում Ինեսսա ԱՆԱՆՅԱՆ
Օպերատորներ Նարինե ԼՈՒԼԱՆՋՅԱՆ
Արմինե ՓԵԹԱԿՉՅԱՆ
375010, Երևան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563 258 ընդհանուր բաժին
Հեռ. 580 631 տեղեկատվության եւ տեղեկագիտության բաժին
E-mail: patent@arminco.com

© Հայարտոնագիր

СОДЕРЖАНИЕ

CONTENTS

ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ И НОРМАТИВНЫЕ ДОКУМЕНТЫ	5	LEGISLATIVE AND NORMATIVE DOCUMENTS
Порядок о регистрации договоров об уступке патентов и лицензионных договоров (на русском языке будет опубликован в следующем номере)	7	Regulation on agreement of patent assignment and registration of license agreement
Порядок о регистрации договоров об уступке товарных знаков и лицензионных договоров (на русском языке будет опубликован в следующем номере)	12	Regulation on agreement of trade mark assignment and registration of license agreement
ИЗОБРЕТЕНИЯ	17, 115	INVENTIONS
Сведения о выданных патентах	19, 117	Informations on granted patents
Сведения о патентах, выданных на основании охранных документов бывшего СССР	44, 139	Informations on patents granted on the basis of protective documents for inventions of the former USSR
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ	45, 141	UTILITY MODELS
Сведения о выданных патентах	47, 143	Informations on granted patents
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ	49, 145	INDUSTRIAL DESIGNS
Сведения о выданных патентах	51, 147	Informations on granted patents
ТОВАРНЫЕ ЗНАКИ	57	TRADE MARKS
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	59	Informations on registered trade marks and service marks
УКАЗАТЕЛИ	105	INDEXES
СООБЩЕНИЯ	111, 151	REPORTS
СПИСОК ПАТЕНТНЫХ ПОВЕРЕННЫХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ	155	LIST OF PATENT ATTORNEYS OF THE REPUBLIC OF ARMENIA
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ	158	TWO-LETTER CODES

Издается Армпатентом с 1995 г.

Ответственный за выпуск Андраник ХАЧИКЯН
 Художественный и технический редактор Манвел БАБАЯН
 Редакторы Гоар АДАМЯН
 Марат ЧУГУРЯН
 Художественное оформление и компьютерная верстка Инесса АНАНЯН
 Операторы Нарине ЛУЛАНДЖЯН
 Армине ПЕТАКЧЯН

375010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3

Тел. 563 258 общий отдел

Тел. 580 631 отдел информации и информатики

E-mail: patent@arminco.com

© Армпатент

**ՕՐԵՆՍԳՐԱԿԱՆ ԵՎ
ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

Գրանցված է
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
№ 36970030, 19.06.1997թ.

ԿԱՐԳ

արտոնագրերի զիջման մասին պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման

1. Սույն կարգը սահմանված է «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 5-րդ մասի, 15 հոդվածի 5-րդ մասի, ինչպես նաեւ ՀՀ վարչապետի 1995թ. դեկտեմբերի 18-ի դ350 որոշմամբ հաստատված ՀՀ արտոնագրային վարչության կանոնադրության 2-րդ կետի համաձայն գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի արտոնագրերի զիջման կամ այլ անձանց դրանց օգտագործման իրավունքի ընձեռման մասին լիցենզային պայմանագրերի (այսուհետեւ նաեւ՝ պայմանագիր) քննարկումն ու գրանցումն իրականացնելու համար:

2. Հայաստանի Հանրապետության արտոնագրային վարչությունում (Հայարտոնագիր) գրանցման ենթակա են այն պայմանագրերը, որոնք վերաբերում են համապատասխան պետական գրանցամատյանում գրանցված գյուտերին, օգտակար սարքերին, արդյունաբերական նմուշներին (այսուհետեւ նաեւ՝ օբյեկտներ):

Չգրանցված պայմանագրերը իրավաբանական ուժ չունեն:

3. Լիցենզային կամ զիջման մասին պայմանագրի գրանցումը կատարվում է պատշաճ ձեւով լրացված դիմումի հիման վրա (ձեւերը կցվում են), որը ներկայացվում է Հայարտոնագիր:

Դիմումը պետք է վերաբերի մեկ պայմանագրի եւ ստորագրվի արտոնագրատիրոջ կողմից: Չեռնարկության (կազմակերպության) անունից ներկայացվող դիմումը ստորագրում է ձեռնարկության (կազմակերպության) ղեկավարը, որի ստորագրությունը վավերացվում է կնիքով:

Հայաստանի Հանրապետությունից դուրս ապրող ֆիզիկական անձինք եւ արտասահմանյան իրավաբանական անձինք լիցենզային կամ զիջման մասին պայմանագրի գրանցման հետ կապված գործերը վարում են Հայաստանի Հանրապետությունում հիմնական բնակության կամ գտնվելու վայր ունեցող իրենց ներկայացուցչի կամ Հայարտոնագրում գրանցված արտոնագրային հավատարմատարի միջոցով:

Դիմումին կից ներկայացվում են՝

ա) լիցենզային կամ զիջման մասին պայմանագիրը (2 օրինակ):

բ) արտոնագիրը (երը):

գ) պայմանագրի գրանցման համար սահմանված տուրքի վճարման անդորրագիրը:

դ) լիազորագիրը, եթե դիմումը ներկայացված է Հայարտոնագրում գրանցված հավատարմատարի միջոցով:

Փաստաթղթերը ներկայացվում են հայերեն: Փաստաթղթերն այլ լեզվով ներկայացնելու դեպքում կցվում է սահմանված կարգով վավերացված դրանց հայերեն թարգմանությունը:

4. Դիմումն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում Հայարտոնագիրը ստուգում է դրա համապատասխանությունը սույն կարգի 3-րդ կետի պահանջներին եւ անհամապատասխանության դեպքում ծանուցագիր է ուղարկում արտոնագրատիրոջը բացակայող կամ ճշգրտված նյութերը երկամսյա ժամկետում ներկայացնելու առաջարկությամբ:

Նշված ժամկետում պահանջված նյութերը չներկայացնելու դեպքում դիմումը մերժվում է:

5. Սույն կարգի 3-րդ կետի պայմաններին բավարարելու դեպքում դիմումը Հայարտոնագրի կողմից ընդունվում է քննարկման, եւ մեկամսյա ժամկետում որոշում է կայացվում պայմանագրի գրանցման վերաբերյալ:

6. Դիմումի քննարկման ընթացքում ստուգվում է՝

ա) լիցենզի կամ զիջման օբյեկտի իրական կարգավիճակը:

բ) պայմանագրի կնքման օրինականությունը, այդ թվում՝ այլ անձանց իրավունքների խախտման բացակայությունը:

Լիցենզային պայմանագրի գրանցման մասին դիմումի քննարկման դեպքում ստուգվում է նաեւ դրա մեջ անհիմն սահմանափակումների առկայությունը, որոնք կարող են վնաս հասցնել ՀՀ տնտեսական շահերին:

7. Ներկայացված նյութերը սույն կարգի 3-րդ եւ 6-րդ կետերով սահմանված պահանջներին բավարարելու դեպքում Հայարտոնագիրը՝

ա) որոշում է կայացնում պայմանագիրը գրանցելու մասին:

բ) պայմանագիրը գրանցում է համապատասխան գրանցամատյանում:

գ) համապատասխան գրառում է կատարում յուրաքանչյուր արտոնագրի մեջ:

դ) վերադարձնում է գրանցված պայմանագրի 1 օրինակը եւ արտոնագիրը (երը):

ե) անհրաժեշտ նշումներ է կատարում հա-

մապատասխան պետական գրանցամատյանում (գյուտի, օգտակար սարքի կամ արդյունաբերական նմուշի)։

գ) տեղեկություններ է հրապարակում զիջման կամ լիցենզային պայմանագրի գրանցման մասին։

8. Եթե լիցենզի կամ զիջման օբյեկտը իրավաբանական ուժ չունի (արտոնագիրը չի գործում), կամ խախտվել են այլ անձանց իրավունքները, կամ առկա են անհիմն սահմանափակումներ, ապա որոշում է կայացվում պայմանագիրը չգրանցելու մասին։

9. Հայարտոնագրում գրանցման ենթակա են նաև լիցենզային պայմանագրերի մեջ կատարված փոփոխությունները, որոնք վերաբերում են կողմերի, պայմանագրի գործողության ժամկետի, տարածքի, փոխանցվող իրավունքների շրջանակների փոփոխությանը։

10. Լիցենզային պայմանագրերի մեջ կատարված փոփոխությունների գրանցումը կատարվում է Հայարտոնագիր ներկայացված դիմումի հիման վրա (ծեւը կցվում է), որին պետք է կցվի՝

ա) լիցենզային պայմանագրի մեջ փոփոխություններ կատարելու մասին պայմանագիրը (համաձայնագիրը) կամ համապատասխան այլ փաստաթուղթ (2 օրինակ)։

բ) համապատասխան տուրքի վճարման անդորրագիրը։

գ) լիազորագիրը, եթե դիմումը ներկայացվում է Հայարտոնագրում գրանցված հավատարմատարի միջոցով։

Դիմումը քննարկվում է սույն կարգի 3-րդ եւ 6-րդ կետերին համապատասխան։

11. Լիցենզային պայմանագրի վաղաժամկետ դադարեցման կամ դրա գործողության երկարածոցման մասին դատարանի կողմից կամ լիցենզատուի եւ լիցենզառուի փոխհամաձայնությամբ կայացված որոշման մասին կողմերը մեկամսյա ժամկետում պետք է հայտնեն Հայարտոնագիր, որը համապատասխան գրառում է կատարում լիցենզային պայմանագրերի գրանցամատյանում եւ այդ մասին տեղեկատվություն է հրապարակում իր պաշտոնական տեղեկագրում։

12. Լիցենզային կամ զիջման մասին պայմանագրերը եւ դրանց մեջ կատարված փոփոխությունները ուժի մեջ են մտնում Հայարտոնագրի կողմից դրանց գրանցման օրվանից։

Լիցենզային կամ զիջման մասին պայմանագրի գրանցման վերաբերյալ Հայարտոնագրի որոշումները կարող են զանգատարկվել դատական կարգով։

13. Գրանցված լիցենզային պայմանագրի գործին կարելի է ծանոթանալ եւ դրանից քաղվածքներ ստանալ միայն լիցենզատուի եւ լիցենզառուի համատեղ գրավոր թույլտվությամբ։

Հաստատված է
Հայարտոնագրի
1997թ. ապրիլի 25-ի
№ 13 հրամանով
Ձեւ Ա Լ 1

Ձեռ ԱԼ 1

Հայաստանի Հանրապետության
արտոնագրային վարչություն**Դիմում**

լիցենզային պայմանագրի գրանցման մասին

Խնդրում եմ գրանցել № _____ արտոնագրով (երով) պաշտպանված գյուտի (երի) (օգտակար սարքի (երի), արդյունաբերական նմուշի (ների) օգտագործման իրավունքի ընձեռնման մասին կից ներկայացվող պայմանագիրը:

Արտոնագրատեր (լիցենզատու) _____

անունը, ազգանունը կամ լրիվ անվանումը, հասցեն, երկրի կոդը

Լիցենզառու _____

անունը, ազգանունը կամ լրիվ անվանումը, հասցեն, երկրի կոդը

Կ. Տ. _____

ստորագրություն, թվական

արտոնագրատիրոջը ներկայացնող անձի անունը, ազգանունը եւ պաշտոնը

Նամակագրության հասցեն _____

փոստային հասցեն, հեռախոսը, ֆաքսը

Կից ներկայացվող փաստաթղթեր

1. Լիցենզային պայմանագիրը _____ թերթից, 2 օրինակ
2. Արտոնագիրը (երը) _____ թերթից, _____ հատ
3. Լիցենզագիրը 1 թերթից, 1 օրինակ
4. Սահմանված տուրքի վճարման անդորրագիրը 1 թերթից, 1 օրինակ

Ձեւ ԱԼ 2

Հայաստանի Հանրապետության
արտոնագրային վարչություն

Դիմում

լիցենզային պայմանագրում կատարված
փոփոխությունների գրանցման մասին

Խնդրում եմ գրանցել № _____ արտոնագրով (երով) պաշտպանված գյուտի (երի)
(օգտակար սարքի (երի), արդյունաբերական նմուշի (ների) օգտագործման իրավունքի
ընձեռնման մասին պայմանագրում (գրանցված է «___» _____ 199 թ. № _____)
կատարված կից ներկայացվող փոփոխությունները:

Արտոնագրատեր (լիցենզատու) _____
անունը, ազգանունը կամ լրիվ անվանումը, հասցեն, երկրի կոդը

Լիցենզառու _____
անունը, ազգանունը կամ լրիվ անվանումը, հասցեն, երկրի կոդը

Կ. Տ. _____
ստորագրություն, քվական արտոնագրատիրոջը ներկայացնող անձի անունը, ազգանունը եւ պաշտոնը

Նամակագրության հասցեն _____
փոստային հասցեն, հեռախոսը, ֆաքսը

Կից ներկայացվող փաստաթղթեր

1. Լիցենզային պայմանագրում կատարված փոփոխությունները
(պայմանագիրը, համաձայնագիրը եւ այլն) _____ թերթից, 2 օրինակ
2. Լիազորագիրը 1 թերթից, 1 օրինակ
3. Սահմանված տուրքի վճարման անդորրագիրը 1 թերթից, 1 օրինակ

Ձեւ Ա Ձ 1

Հայաստանի Հանրապետության
արտոնագրային վարչություն

Դիմում

արտոնագրի զիջման պայմանագրի գրանցման մասին

Խնդրում եմ գրանցել գյուտի (երի) (օգտակար սարքի (երի), արդյունաբերական
նմուշի (ների) № _____ արտոնագրի (երի) զիջման մասին կից ներկայացվող
պայմանագիրը:

Արտոնագրատեր (զիջող) _____
անունը, ազգանունը կամ լրիվ անվանումը, հասցեն, երկրի կոդը

Ստացող _____
անունը, ազգանունը կամ լրիվ անվանումը, հասցեն, երկրի կոդը

Կ. Տ. _____
ստորագրություն, թվական արտոնագրատիրոջը ներկայացնող անձի անունը, ազգանունը եւ պաշտոնը

Նամակագրության հասցեն _____
փոստային հասցեն, հեռախոսը, ֆաքսը

Կից ներկայացվող փաստաթղթեր

1. Ձիջման մասին պայմանագիրը _____ թերթից, 2 օրինակ
2. Արտոնագիրը (երը) _____ թերթից, _____ հատ
3. Լիազորագիրը 1 թերթից, 1 օրինակ
- Սահմանված տուրքի վճարման անդորրագիրը 1 թերթից, 1 օրինակ

Գրանցված է
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
№ 36970031, 26.06.1997թ.

ԿԱՐԳ

ապրանքային նշանների զիջման մասին պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման

1. Սույն կարգը սահմանված է 1997թ. մայիսի 12-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27 հոդվածի համաձայն գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանի (այսուհետեւ՝ ապրանքային նշան) զիջման կամ այլ անձանց դրա օգտագործման իրավունքի ընձեռման մասին լիցենզային պայմանագրերի (այսուհետեւ նաեւ՝ պայմանագիր) քննարկումն ու գրանցումն իրականացնելու համար:

2. Հայաստանի Հանրապետության արտոնագրային վարչությունում (Հայարտոնագիր) գրանցման ենթակա են այն պայմանագրերը, որոնք վերաբերում են ապրանքային նշանի Հայաստանի Հանրապետության պետական մատչանում (այսուհետեւ՝ գրանցամատչան) գրանցված ապրանքային նշաններին:

Զգրանցված պայմանագրերը համարվում են անվավեր:

3. Լիցենզային կամ զիջման մասին պայմանագրերի գրանցումը կատարվում է պատշաճ ձևով լրացված դիմումի հիման վրա (ծեւերը կցվում են), որը ներկայացվում է Հայարտոնագիր:

Դիմումը պետք է վերաբերի մեկ պայմանագրի եւ ստորագրվի նշանի սեփականատիրոջ կողմից: Զեռնարկության (կազմակերպության) անունից ներկայացվող դիմումը ստորագրում է ձեռնարկության (կազմակերպության) ղեկավարը, որի ստորագրությունը վավերացվում է կնիքով:

Օտարերկրյա իրավաբանական անձինք եւ անհատ ձեռներեցները ապրանքային նշանի զիջման մասին կամ լիցենզային պայմանագրի գրանցման հետ կապված գործերը վարում են Հայաստանի Հանրապետությունում հիմնական բնակության կամ գտնվելու վայր ունեցող իրենց ներկայացուցչի կամ Հայարտոնագրում գրանցված արտոնագրային հավատարմատարի միջոցով:

Դիմումին կից ներկայացվում են՝

ա) լիցենզային կամ զիջման մասին պայմանագիրը (2 օրինակ):

բ) նշանի գրանցման վկայականը (ներք):

գ) պայմանագրի գրանցման համար սահմանված տուրքի վճարման անդորրագիրը:

դ) լիազորագիրը, եթե դիմումը ներկայացված է Հայարտոնագրում գրանցված հավատարմատարի միջոցով:

Դիմումը եւ դրան կից նյութերը ներկայացվում են հայերեն: Փաստաթղթերն այլ լեզվով ներկայացնելու դեպքում կցվում է սահմանված կարգով վավերացված դրանց հայերեն թարգմանությունը:

4. Դիմումն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում Հայարտոնագիրն ստուգում է դրա համապատասխանությունը սույն կարգի 3-րդ կետի պահանջներին եւ անհամապատասխանության դեպքում ծանուցագիր է ուղարկում նշանի սեփականատիրոջը՝ բացակայող կամ ճշգրտված նյութերը երկամսյա ժամկետում ներկայացնելու առաջարկությամբ:

Նշված ժամկետում պահանջված նյութերը չներկայացնելու դեպքում դիմումը ներժվում է:

5. Սույն կարգի 3-րդ կետի պայմաններին բավարարելու դեպքում դիմումը Հայարտոնագրի կողմից ընդունվում է քննարկման, եւ մեկամսյա ժամկետում որոշում է կայացվում պայմանագրի գրանցման վերաբերյալ:

6. Դիմումի քննարկման ընթացքում ստուգվում է՝

ա) հանդիսանու՞մ է արդյոք ապրանքային նշանը (նշանները) զիջող անձը կամ դրա (դրանց) օգտագործման իրավունքն ընձեռող անձը (լիցենզատու) ապրանքային նշանի (նշանների) սեփականատերը:

բ) որոշվա՞ծ է արդյոք ապրանքային նշանի (նշանների) նկատմամբ իրավունքների փոխանցման տեսակը (զիջում կամ լիցենզ):

գ) որոշվա՞ծ է արդյոք փոխանցվող իրավունքների ծավալը (լիցենզի տեսակը, գործողության ժամկետն ու տարածքը, այն ապրանքների ցանկը, որոնց նկատմամբ զիջվում է ապրանքային նշանը (նշանները) կամ ընձեռվում է լիցենզ):

դ) այն պարտադիր պայմանը, որ լիցենզառուի ապրանքը որակապես չպետք է զիջի լիցենզատուի ապրանքին եւ վերջինս հսկողություն պետք է իրականացնի այդ պայմանի կատարման նկատմամբ:

7. Սույն կարգի 3-րդ եւ 6-րդ կետերի պայմաններին բավարարելու դեպքում Հայարտոնագիրը՝

ա) որոշում է կայացնում պայմանագիրը գրանցելու մասին.

բ) պայմանագիրը գրանցում է համապատասխան գրանցամատյանում.

գ) համապատասխան գրառում է կատարում (յուրաքանչյուր) նշանի վկայականի մեջ.

դ) նոր վկայական է ձեւակերպում այն անձի անունով, ում զիջվել է նշանը, նշելով այն ապրանքները, որոնց նկատմամբ գրանցվել է զիջման պայմանագիրը (եթե զիջումը կատարվել է ապրանքների մի մասի համար).

ե) վերադարձնում է գրանցված պայմանագրի մեկ օրինակը եւ նշանի վկայականը (ները).

զ) տեղեկություններ է հրապարակում զիջման կամ լիցենզային պայմանագրի գրանցման մասին:

8. Եթե ապրանքային նշանը զիջող անձը դրա սեփականատերը չէ, կամ լիցենզատուն իրավասու չէ փոխանցել ապրանքային նշանի օգտագործման իրավունքը, ապա որոշում է կայացվում պայմանագիրը չգրանցելու մասին:

Ապրանքային նշանի զիջման մասին պայմանագիրը չի գրանցվում նաեւ այն դեպքում, եթե այն կարող է սպառողին մոլորության մեջ զգել ապրանքի կամ արտադրողի հետ կապված հարցերում:

9. Հայարտոնագրում գրանցման ենթակա են նաեւ լիցենզային պայմանագրերի մեջ կատարված փոփոխությունները, որոնք վերաբերում են կողմերի, պայմանագրի գործողության ժամկետի, տարածքի, փոխանցվող իրավունքների ծավալի փոփոխությանը:

Սույն կարգին համապատասխան չգրանցված փոփոխությունները համարվում են անվավեր:

10. Լիցենզային պայմանագրերի մեջ կատարված փոփոխությունների գրանցումը կատարվում է Հայարտոնագիր ներկայացված դիմումի հիման վրա (ձեւը կցվում է), որին պետք է կցվի՝ ա) լիցենզային պայմանագրի մեջ փոփոխություններ կատարելու մասին պայմանագիրը (համաձայնագիրը) կամ համապատասխան այլ փաստաթուղթ (2 օրինակ).

բ) համապատասխան տուրքի վճարման անդորրագիրը.

գ) լիազորագիրը, եթե դիմումը ներկայացված է Հայարտոնագրում գրանցված հավատարմատարի միջոցով:

Դիմումը քննարկվում է սույն կարգի 3-րդ եւ 6-րդ կետերին համապատասխան:

11. Լիցենզային պայմանագրի վաղաժամկետ դադարեցման կամ դրա գործողության երկարաձգման մասին դատարանի կողմից կամ լիցենզատուի եւ լիցենզատուի փոխհամաձայնությամբ կայացված որոշման մասին մեկամսյա ժամկետում կողմերը պետք է հայտնեն Հայարտոնագիր, որը համապատասխան գրառում է կատարում լիցենզային պայմանագրերի գրանցամատյանում եւ այդ մասին տեղեկատվություն է հրապարակում իր պաշտոնական տեղեկագրում:

12. Սույն կարգին համապատասխան գրանցված պայմանագրերը եւ դրանց մեջ կատարված փոփոխությունները ուժի մեջ են մտնում դրանց գրանցման օրվանից:

Լիցենզային կամ զիջման մասին պայմանագրի գրանցման վերաբերյալ Հայարտոնագրի որոշումները կարող են զանգատարկվել դատական կարգով:

Հաստատված է
Հայարտոնագրի
1997թ. ապրիլի 25-ի
№ 13 հրամանով

Ձեւ Ե Լ 1

Հայաստանի Հանրապետության
արտոնագրային վարչություն

Դիմում

լիցենզային պայմանագրի գրանցման մասին

Խնդրում եմ գրանցել ապրանքային նշանի (ների) օգտագործման իրավունքի
ընձեռնման մասին կից ներկայացվող պայմանագիրը:

Ապրանքային նշանի գրանցման վկայական (ներ) № _____

Նշանի սեփականատեր (լիցենզատու) _____

անունը, ազգանունը կամ լրիվ անվանումը, հասցեն, երկրի կոդը

Լիցենզատու _____

անունը, ազգանունը կամ լրիվ անվանումը, հասցեն, երկրի կոդը

Կ. Տ. _____

ստորագրություն, թվական

սեփականատիրոջը ներկայացնող անձի անունը, ազգանունը եւ պաշտոնը

Նամակագրության հասցեն _____

փոստային հասցեն, հեռախոսը, ֆաքսը

Կից ներկայացվող փաստաթղթեր

1. Լիցենզային պայմանագիրը _____ թերթից, 2 օրինակ
2. Նշանի գրանցման վկայականը (ները) _____ թերթից, _____ հատ
3. Սահմանված տուրքի վճարման անդորրագիրը 1 թերթից, 1 օրինակ
4. Լիազորագիրը 1 թերթից, 1 օրինակ

Ձեւ Ն L 2

Հայաստանի Հանրապետության արտոնագրային վարչություն

Դիմում

լիցենզային պայմանագրում կատարված փոփոխությունների գրանցման մասին

Խնդրում եմ գրանցել ապրանքային նշանի (ների) օգտագործման իրավունքի ընձեռման մասին պայմանագրում (գրանցված է «...» 199 թ. №...) կատարված կից ներկայացվող փոփոխությունները: Ապրանքային նշանի գրանցման վկայական (ներ) №...

Նշանի սեփականատեր (լիցենզատու) _____
անունը, ազգանունը կամ լրիվ անվանումը, հասցեն, երկրի կոդը

Լիցենզառու _____
անունը, ազգանունը կամ լրիվ անվանումը, հասցեն, երկրի կոդը

Կ. Տ. _____
ստորագրություն, թվական սեփականատիրոջը ներկայացնող անձի անունը, ազգանունը եւ պաշտոնը

Նամակագրության հասցեն _____
փոստային հասցեն, հեռախոսը, ֆաքսը

Կից ներկայացվող փաստաթղթեր

- 1. Լիցենզային պայմանագրում կատարված փոփոխությունները (պայմանագիրը, համաձայնագիրը եւ այլն) ... թերթից, 2 օրինակ
2. Լիազորագիրը 1 թերթից, 1 օրինակ
3. Սահմանված տուրքի վճարման անդորրագիրը 1 թերթից, 1 օրինակ

Ձեւ Ն Զ 1

Հայաստանի Հանրապետության
արտոնագրային վարչություն

Դիմում

ապրանքային նշանի զիջման
պայմանագրի գրանցման մասին

Խնդրում եմ գրանցել ապրանքային նշանի (ների) զիջման մասին կից ներկայացվող
պայմանագիրը:

Ապրանքային նշանի գրանցման վկայական (ներ) № _____

Նշանի սեփականատեր (զիջող) _____

անունը, ազգանունը կամ լրիվ անվանումը, հասցեն, երկրի կոդը

Ստացող _____

անունը, ազգանունը կամ լրիվ անվանումը, հասցեն, երկրի կոդը

Կ. Տ. _____
ստորագրություն, թվական նշանի սեփականատիրոջը ներկայացնող անձի անունը, ազգանունը եւ պաշտոնը

Նամակագրության հասցեն _____

փոստային հասցեն, հեռախոսը, ֆաքսը

Կից ներկայացվող փաստաթղթեր

1. Ջիջման մասին պայմանագիրը _____ թերթից, 2 օրինակ
2. Նշանի գրանցման վկայականը (ները) _____ թերթից, _____ հատ
3. Սահմանված տուրքի վճարման անդորրագիրը 1 թերթից, 1 օրինակ

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի**

- 11 արտոնագրի համարը
- 21 հայտի համարը
- 22 հայտի ստացման թվականը
- 23 լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
- 24 թվականը, որից սկսվում է ՀՀ արտոնագրով վերապահված իրավունքների գործողությունը
- 31 առաջնային հայտի համարը
- 32 առաջնային հայտի ներկայացման թվականը
- 33 երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
- 46 հավակնության սահմանման հրապարակման թվականը
- 51 միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
- 54 գյուտի անվանումը
- 57 գյուտի հավակնության սահմանումը
- 62 ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
- 71 հայտատուն(ները), երկրի կոդը
- 72 գյուտի հեղինակը(ները), երկրի կոդը
- 73 արտոնագրատերը, հասցեն**, երկրի կոդը
- 74 արտոնագրային հավատարմատար
- 76 հեղինակը, որը նաեւ հայտատու է արտոնագրատեր է, հասցեն**, երկրի կոդը
- 86 միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
- (*) տվյալներ նախկին պաշտպանական այն փաստաթղթի մասին, որի հիման վրա տրվել է ՀՀ արտոնագիրը

Փաստաթղթի տեսակի կոդը

- A1 գյուտի արտոնագիր
- A2 գյուտի ժամանակավոր արտոնագիր
- B1 ԽՍՀՄ կամ ԽՍՀՄ նախկին սուբյեկտ հանդիսացող պետության պաշտպանական փաստաթղթի հիման վրա տրված արտոնագիր
- B2 նախապես ՀՀ ժամանակավոր արտոնագրով պաշտպանված գյուտի արտոնագիր

** ազգային արտոնագրատերերի դեպքում

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51)⁵ **A01N 57/20** (11) **300 A1**
- (21) 000556 (22) 29.06.94
- (23) 19.06.91
- (31) 2-162191 (32) 20.06.90 (33) JP
- (72) Ն. Սակաշիտա, Հ. Յոշիի, Ց. Յոշիդա, Շ. Հոն-գավա, Հ. Կիկուգավա, JP
- (71) (73) Իսիհարա Սանգյո Կայշա, ԼԹԳ, JP
- (74) Ն. Թումանյան
- (54) (57)

Հերբիցիդային բաղադրանյութ, որը պարունակում է սուլֆոնիլմիզանյութի ածանցյալ եւ հոմոլալանին-4-իլ-(մեթիլ) ֆոսֆինաթթվի ամոնիումային աղ. *տարբերվում է* նրանով, որ այն որպես սուլֆոնիլմիզանյութի ածանցյալ պարունակում է 1-(4,6-երկմեթօքսիպիրիմիդին-2-իլ)-3-(3-եռֆտորմեթիլ-2-պիրիդիլսուլֆոնիլ) միզանյութ 1:0,6-80 կշռային հարաբերակցությամբ:

- (51)⁵ **A23C 9/00** (11) **301 A2**
- A23C 19/06**
- A23C 19/08**
- (21) 96133 (22) 27.06.96
- (72) Ռ. Ա. Բեգլարյան, Ա. Է. Արաքսյանց, Ս. Շ. Շաքարյան, AM
- (71) (73) Անդրեյ Էդուարդի Արաքսյանց, Երևան, Ա. Խաչատրյան 18, բն.66, AM
- (54) (57)

Արագ հասունացող պանրային զանգվածի արտադրության եղանակ, որը ներառում է չոր, յուղագուրկ անարատ կաթի վերականգնում, ստացված խառնուրդի պաստերում, կալցիումի աղերի, ֆերմենտի եւ կաթնամերանի առկայությամբ մակարդում, ստացված մակարդուկի կտրատում, պանրահատիկի դնում, շիճուկի հեռացում, պանրային զանգվածի չեղերում, մանրացում, բուֆերային եւ կերակրի աղերի ավելացում, փաթեթավորում եւ հասունացում. *տարբերվում է* նրանով, որ պաստերումից հետո, ավելացնելով 0,4% կաթնամերան, 0,0004% ֆերմենտ, 0,00042% միկրոէլեմենտներ, 0,12% կալցիումի միաֆոսֆատ եւ 0,02% կալցիումի քլորիդ, 8-12 ժամվա ընթացքում, 8-10°C ջերմաստիճանում կատարում են կաթի սառը ֆերմենտացում՝ որպես կաթնամերան օգտագործելով *Streptococcus lactis-3905*, *Lactobacterium plantarum-2204*, *Streptococcus parasenterides-3728*, *Streptococcus bovis-877* մանրէների կոնսորցիումը 1:3:1:1 հարաբերակցությամբ, իսկ մակարդումը կատարում են 15-25 րոպեի ընթացքում, 34-38°C

ջերմաստիճանում 1,5% կաթնամերանի եւ 0,0012% ֆերմենտի առկայությամբ:

- (51)⁵ **A23C 9/12** (11) **302 A2**
- (21) 000361 (22) 04.11.94
- (72) Հ. Ս. Ղազարյան, Ռ. Ա. Բեգլարյան, Ս.Շ. Տեր-Ղազարյան, Գ. Բ. Ղուկասյան, Ռ. Ս. Ավետիսյան, Ն. Ս. Հարությունյան, AM
- (71) (73) Հակոբ Ստեփանի Ղազարյան, Կոտայքի մարզ, գ. Բալահովիտ, Թումանյան 3, AM
- (54) (57)

Streptococcus bovis 877 (BKՊՄ Y-2648), **Streptococcus faecalis 1763** (BKՊՄ Y-2658), **Lactobacillus salivarius 1588** (BKՊՄ Y-2646), **Lactobacillus acidophilus 265** (BKՊՄ Y-2644), **Lactobacillus plantarum 2958** (BKՊՄ Y-2647), **Lactobacillus plantarum 5832 մանրէների շտամների կոնսորցիում**, որն օգտագործվում է կաթնամթերքի արտադրության մեջ:

- (51)⁵ **A23C 19/08** (11) **303 A2**
- (21) 96013 (22) 02.02.96
- (76) Ռազմիկ Արշակի Բեգլարյան, Երևան, Արաբկիրի 21, բն.56, Անդրեյ Էդուարդի Արաքսյանց, Երևան, Ա. Խաչատրյանի 18, բն. 66, AM
- (54) (57)

Հալած պանիր, որը պարունակում է սոյայի հիդրոլիզատ, պանրի զանգված, հոտազերծված բուսական յուղ , ձվի փոշի, ներկանյութ, հալիչ աղ, կաթի փոշի, բնական պանիր եւ խմելու ջուր. *տարբերվում է* նրանով, որ բաղադրամասերը վերցված են հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ.%)

<i>սոյայի հիդրոլիզատ</i>	10
<i>պանրի զանգված</i>	40
<i>հոտազերծված բուսական յուղ</i>	5
<i>ձվի փոշի</i>	0.5
<i>ներկանյութ</i>	0.5
<i>հալիչ աղ</i>	3.0
<i>կաթի փոշի</i>	5.0
<i>բնական պանիր</i>	24.0
<i>խմելու ջուր</i>	<i>մնացածը:</i>

(51)⁵ **A23K 1/08** (11) **304 A2**
C12N 1/16
C12N 1/20

(21) 000374 (22) 18.11.94
(72) Լ. Հ. Երզնկյան, Լ. Հ. Հակոբյան, Հ. Գ. Բա-
լասանյան, Լ. Մ. Չարյան, Հ. Խ. Սահակյան,
Ք. Ա. Վարազյան, Փ. Գ. Սարուխանյան, AM
(71) (73) ՀՀ ԳԱԱ Միկրոբիոլոգիայի ինստիտուտ,
ք. Արովյան, Արզնու խճուղի, AM
(54) (57)

Թռչնակերի ստացման եղանակ, ըստ որի կաթնաշիճուկում համատեղ աճեցնում են *Candida pelliculose* 507 խմորիչների շտամ եւ կաթնաթթվա-
յին մանրէների շտամներ. *լրարբերվում է* նրանով, որ կաթնաթթվային մանրէներից օգտագործում են *Lactobacterium acidophilum* 317/402 «Նարինե» շտամը, ընդ որում շտամները ներմուծում են կաթ-
նաշիճուկի ծավալի նկատմամբ համապատասխանաբար 7-10 եւ 2-3 տոկոս քանակությամբ:

(51)⁵ **A23K 1/175** (11) **305 A2**
(21) 000331 (22) 02.09.94

(72) Լ. Ա. Ներսեսյան, Ա. Մ. Տեր-Ստեփանյան,
AM
(71) (73) Արմեն Մանուկի Տեր-Ստեփանյան,
Երևան, Մոլորվական 48/2, բն. 41, AM
(54) (57)

**Վիտամինահանքային կերային հավե-
լանյութ**, որը պարունակում է a-տոկոֆերոլի ացե-
տատ. *լրարբերվում է* նրանով, որ լրացուցիչ ավե-
լացված է բենտոնիտ՝ բաղադրամասերի հետեւյալ
հարաբերակցությամբ (զանգվ. %).

<i>a-տոկոֆերոլի ացետատ</i>	20-25
<i>բենտոնիտ</i>	75-80

(51)⁵ **A41C 1/00** (11) **306 A2**
A61B 5/02

(21) 000314 (22) 28.07.94
(72) Ռ. Պ. Ստամբոլյան, Մ. Ա. Մարտիրոսյան, Մ.
Ա. Մուրադյան, Կ. Դ. Ավետիսյան, AM
(71) (73) Մ. Հերացու անվան Երեւանի պետական
բժշկական ինստիտուտ, Երեւան, Կորյունի
2, AM
(54) (57)

**Մրտի քարտեզագրման բազմաէլեկտրոդ
գոտի**, որն ունի ամրակման տարրեր, փափուկ հիմք
եւ նրանում ներսարված, նրա երկայնական ա-
ռանցքին զուգահեռ շարքերով դասավորված, հո-
ղավոր հպաթիթեղներով էլեկտրոդներ. *լրարբեր-
վում է* նրանով, որ գոտու արտաքին երեսին, շար-
քերի ծայրերի մոտ նրանց ուղղահայաց ներսար-
ված են կոշտության թիթեղներ, որոնց ամրակցված

են յուրաքանչյուր շարքի երկու կողմից ձգված ա-
ռածական առձգիչներ:

(51)⁵ **A61B 1/00** (11) **307 A2**
(21) 96157 (22) 01.07.96

(76) Յուրի Միխայելի Պողոսյան, Երեւան, Սուն-
դուկյան 29, բն. 9, Վարդան Էդուարդի Հովա-
կիմյան, Երեւան, Ղազար Փարպեցու 11, բն.
3, AM
(54) (57)

Հայմորիտի բուժման եղանակ, որը ներառում
է լորձաթաղանթավերնոսկրային լաթի ձեւավորում,
հայմորյան ծոցի առաջնային պատի ոսկրաշա-
ղափում, դրանից ոսկրային տրանսպլանտատի
ձեւավորում, ախտաբանական հյուսվածքների հե-
ռացում, քթի խոռոչի հետ հաղորդակցության ստեղ-
ծում, ոսկրային տրանսպլանտատով պատի ա-
րատի ծածկում եւ շերտազատված լորձաթաղան-
թի հետագա կարում. *լրարբերվում է* նրանով, որ
լորձաթաղանթավերնոսկրային լաթի ձեւավորումը
կատարում են լորձաթաղանթի մանգաղածե կամ
սեղանածե կտրվածքով՝ ժանիքի մակարդակից
մինչեւ ալտոսկրատամնաբնային կատարի
հիմքը 0.5 սմ-ից ոչ ավելի խորությամբ, ոսկրաշա-
ղափումը՝ ոսկրահյուսվածքի տեսանելի շերտի
ամբողջ երկարությամբ եւ շնափուսի՝ վերին սահ-
մանով անցման ծալքին զուգահեռ ձեւավորված են-
թավերնոսկրային հորանցքով, իսկ պատի արատի
ծածկումը՝ ոսկրային տրանսպլանտատի լորձաթա-
ղանթավերնոսկրային լաթի հետ միասին շրջածալ-
ման միջոցով:

(51)⁵ **A61B 5/00** (11) **308 A2**
(21) 96203 (22) 23.07.96

(72) Ռ. Պ. Ստամբոլյան, Լ. Մ. Միքայելյան, Կ.
Դ. Ավետիսյան, Ա. Գ. Շահումյան, AM
(71) (73) Երեւանի Մ.Հերացու անվան պետական
բժշկական համալսարան, Երեւան, Կորյունի
2, AM
(54) (57)

**Մրտի հիվանդությունների վաղ ախտորոշ-
ման եղանակ**, ըստ որի որոշում են էլեկտրասրտա-
գրի S, ST եւ T ատամիկների մակերեսները, դրանց
շեղումը հավասարաէլեկտրական գծից եւ ըստ
վերեւ կամ ներքեւ շեղումների ախտորոշում պա-
կային արյան շրջանառության խախտումները.
լրարբերվում է նրանով, որ ուղղակիորեն հաշվար-
կում են փորոքային համալիրի վերջնամասի մա-
կերեսը՝ S ատամիկի, ST միջակայքի եւ T ատամիկի,
որպես մեկ ամբողջություն:

(51)⁵ **A61B 17/00** (11) **309 A2**
 (21) 000564 (22) 07.07.95
 (72) Մ. Մ. Մարտիրոսյան, AM
 (71) (73) Մ. Հերացու անվ. Երևանի պետական
 բժշկական համալսարան, Երևան,
 Կորյունի 2, AM
 (54) (57)

Գանգի վնասվածքի պլաստիկայի եղանակ.
 ըստ որի կատարում են գանգի հատվածի մերկացում, ոսկրային վնասվածքի եզրերի մասնահատում եւ մանրատում, պատրաստում են ստացված ոսկրափշրանքի եւ հիվանդի արյան խառնուրդ եւ այդ խառնուրդով ծածկում գանգի վնասվածքը. *փարբերվում է նրանով*, որ ոսկրի մանրատումը կատարում են մինչեւ խարտուքի աստիճան, իսկ խառնուրդով ծածկված վնասվածքը փակում են գիպսե վիրակապով:

(51)⁵ **A61B 17/00** (11) **310 A2**
 (21) 96115 (22) 19.06.96
 (72) Լ. Ու.Նազարով, Է. Բ. Հակոբյան, Ռ. Ա. Համբարձումյան, Ա. Լ. Կուրբանյան, Գ. Է. Էքսյուզյան, Հ. Ռ. Բազիյան, Ա. Մ. Մինասյան, Ա. Գ. Դավթյան, Գ. Ա. Կազարյան, Օ. Գ. Սկրտչյան, Կ. Գ. Հովհաննեսյան, AM
 (71) (73) ՀՀ առողջապահության նախարարության «Պրոկտոլոգիայի ԳՀԻ» պետական ձեռնարկություն, Երևան, Հ. Ներսիսյանի փակուղի 19, AM
 (54) (57)

Սուր պարապրոկտիտով հիվանդների հաստ աղիքի քաղցկեղային հիվանդությունների ախտորոշման եղանակ. ըստ որի կատարում են թարախակույտի ծակում եւ հաստ աղիքի ֆիբրոկոլոնոսկոպիա. *փարբերվում է նրանով*, որ հետազոտում են հաստ աղիքի լորձաթաղանթի փոփոխությունները՝ պոլիպների տեսքով, եւ եթե պոլիպների տրամագիծը չի գերազանցում 1.0 սմ ու դրանք ունեն բարակ երկար ոտիկ, ախտորոշում են նախաքաղցկեղային գոյացում, իսկ եթե պոլիպների տրամագիծը 1.0 սմ-ից ավելի է ու դրանք ունեն լայն ոտիկ, ախտորոշում են քաղցկեղային գոյացում:

(51)⁵ **A61D 1/00** (11) **311 A2**
 (21) 96135 (22) 28.06.96
 (72) Գ. Բ. Սերոբյան, AM
 (71) (73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երևան, Տերյան 74, AM
 (54) (57)

Կովերի թաքնված մաստիտի ախտորոշման եղանակ. ըստ որի ախտորոշիչով մշակում են կաթնագեղձի արտազատուկը եւ դրանում դոնորդանման գանգվածի գոյացման դեպքում ախտորոշում

մաստիտ. *փարբերվում է նրանով*, որ որպես ախտորոշիչ օգտագործում են սուլֆոնոլի եւ կաուստիկ սողայի ջրային լուծույթը՝ բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ. %).

<i>սուլֆոնոլ</i>	0.5
<i>կաուստիկ սողա</i>	0.5
<i>ջուր</i>	<i>մնացածը,</i>

ընդ որում ախտորոշիչը եւ արտազատուկը վերցնում են 1:1 հարաբերակցությամբ:

(51)⁵ **A61H 39/00** (11) **312 A2**
 (21) 97019 (22) 25.02.97
 (76) Ռոմեն Սերգեյի Ավագյան, Երևան, Աբովյան 38, բն. 1, AM, Մովսես Սերգեյի Ավագյան, Երևան, Վրացական 6, բն. 72, AM, Տեպպոնե Միխայիլ Վիկտորի, Մոսկվայի մարզ, ք. Տոմիլինո, Պիոներսկայա 8, բն. 92, RU
 (54) (57)

1. **Օբյեկտների նվազագույն դիմադրություն ունեցող գոտիների եւ կետերի վրա անհպակ ազդեցության եղանակ.** ըստ որի օբյեկտը տեղադրում են պսակածե պարպման էլեկտրաստատիկ դաշտում. *փարբերվում է նրանով*, որ օբյեկտը նախապես հողակցում են:

2. Եղանակն ըստ 1-ին կետի. *փարբերվում է նրանով*, որ օբյեկտը նախապես ծածկում են դիէլեկտրիկի շերտով:

3. **Օբյեկտների նվազագույն դիմադրություն ունեցող գոտիների եւ կետերի վրա անհպակ ազդեցության սարք.** որն ունի կառավարման վահանի եւ տեսաձրման գլխիկի պատյաններում տեղակայված սնուցման բլոկ եւ միմյանց հաջորդաբար միացված վերտոնային հաճախության գեներատոր, հզորության ուժեղացուցիչ, բարձրավոլտ բլոկ եւ էլեկտրոդներ. *փարբերվում է նրանով*, որ այն լրացուցիչ ունի կարգավորվող ենթաձայնային հաճախության գեներատոր, որի մուտքը միացված է սնուցման բլոկի ելքին, իսկ ելքը՝ վերտոնային հաճախության գեներատորի մուտքին, ընդ որում բարձրավոլտ բլոկը եւ էլեկտրոդները տեղադրված են տեսաձրման գլխիկի պատյանում:

(51)⁵ **A61K 1/00** (11) **313 A2**
 (21) 000590 (22) 14.08.95
 (76) Վորոբյովա Տամարա Վասիլենա, Պետրոզավոդսկ, Լենինի փող.18. բն.47, RU
 (74) Է. Նահապետյան
 (54) (57)

1. **Իմունամոդուլավորող ազդեցության եւ հյուսվածքի բջիջների բազմացման կարգաբերման համակարգի խախտված գործունեությունը վերա-**

կանգնող միջոց, որը պարունակում է ազդող նյութ եւ նոսրացուցիչ. *տարբերվում է* նրանով, որ որպես ազդող նյութ այն պարունակում է սնդիկի երկբլորիդ կամ կալիումի արսենիտ, կամ ցատրիումի արսենատ՝ էլանյութերի հետեւյալ հարաբերակցությամբ, զանգվ. %

սնդիկի երկբլորիդ կամ կալիումի արսենիտ, կամ ցատրիումի արսենատ 0,01-1,5
նոսրացուցիչ մինչեւ 100,0:

2. Միջոցն ըստ 1-ին կետի. *տարբերվում է* նրանով, որ որպես նոսրացուցիչ այն պարունակում է խաղողի բնական սպիտակ գինի՝ շաքարի 3-4 զանգվ. % պարունակությամբ, կամ կաթի շիճուկ՝ շաքարի 3-4 զանգվ. % պարունակությամբ:

3. Միջոցն ըստ 1-ին կետի ներքին եւ արտաքին կիրառման համար. *տարբերվում է* նրանով, որ այն կազմված է հետեւյալ բաղադրամասերից, զանգվ. %.

սնդիկի երկբլորիդ 0,01-0,1
խաղողի բնական սպիտակ գինի՝ շաքարի 3-4 զանգվ. % պարունակությամբ, կամ կաթի շիճուկ՝ շաքարի 3-4 զանգվ. % պարունակությամբ մինչեւ 100,0:

4. Միջոցն ըստ 1-ին կետի ներքին եւ արտաքին կիրառման համար. *տարբերվում է* նրանով, որ որպես նոսրացուցիչ այն պարունակում է խոզի ճարպի, բնական մեղրի եւ էթիլային սպիրտի խառնուրդ՝ էլակետային բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ, զանգվ. %.

սնդիկի երկբլորիդ 0,03-0,13
խոզի ճարպ 30,7-37,3
բնական մեղր 30,7-37,3
էթիլային սպիրտ մինչեւ 100,0:

5. Միջոցն ըստ 1-ին կետի. *տարբերվում է* նրանով, որ այն կազմված է հետեւյալ բաղադրամասերից, զանգվ. %.

նստրիումի արսենատ կամ կալիումի արսենիտ 0,05-0,15
խաղողի բնական սպիտակ գինի՝ շաքարի 3-4 զանգվ. % պարունակությամբ, կամ կաթի շիճուկ՝ շաքարի 3-4 զանգվ. % պարունակությամբ մինչեւ 100,0:

6. Միջոցն ըստ 1-ին կետի արտաքին կիրառման համար. *տարբերվում է* նրանով, որ այն կազմված է հետեւյալ բաղադրամասերից, զանգվ. %.

սնդիկի երկբլորիդ 0,3-1,5
խաղողի բնական սպիտակ գինի՝ շաքարի 3-4 զանգվ. % պարունակությամբ, կամ կաթի շիճուկ՝ շաքարի 3-4 զանգվ. % պարունակությամբ մինչեւ 100,0:

- (51)⁵ **A61K 7/043** (11) **314 A2**
C09D 101/18
C09D 131/04
- (21) 000334 (22) 06.09.94
- (72) Մ. Գ. Բոյախչյան, Է. Բ. Մաֆարյան, Ն. Ի. Ասատրյան, Ի. Պ. Սայադյան, AM
- (71) (73) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Երեւան, Տերյան 105, AM
- (54) (57)

Եղունգները պատելու լաք, որը պարունակում է թաղանթագոյացնող եւ լուծիչ. *տարբերվում է* նրանով, որ որպես թաղանթագոյացնող օգտագործում են 2/1 հարաբերակցությամբ վերցված, 0,15-0,3 դ/գ բնութագրական մածուցիկություն ունեցող վինիլացետատի ու կոտոնաթթվի համապոլիմերը եւ A մակնիշի ցելուլոզիդ, իսկ որպես լուծիչ՝ 1/(2-3) հարաբերակցությամբ բուտիլացետատի ու էթիլցելոզիլի խառնուրդը՝ բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ. %).

թաղանթագոյացնող լուծիչ 12-20
80-88:

- (51)⁵ **A61K 7/48** (11) **315 A2**
(21) 96168 (22) 09.07.96
- (72) Պ. Ա. Ղազարյան, Ա. Պ. Ղազարյան, Ռ. Գ. Պարոնիկյան, Ա. Պ. Ղազարյան, AM
- (71) (73) Պետրոս Արամի Ղազարյան, Երեւան, Սունդուկյան 23, բն. 83, AM
- (54) (57)

Մաշկի սնկային հիվանդությունների բուժման միջոց “Պետամցին Ա”, որը պարունակում է ֆունգիցիդային պատրաստուկ. *տարբերվում է* նրանով, որ այն լրացուցիչ պարունակում է հեքսամեթիլենտետրամին, տոկոֆերոլացետատի 30 % յուղային լուծույթ, ֆոսֆատիդիլսոլինի 96% սպիրտային լուծույթ, թորած ջուր, իսկ որպես ֆունգիցիդային պատրաստուկ օգտագործում են քացախաթթվի 12% լուծույթը՝ բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ. %).

քացախաթթվի 12% լուծույթ 80
հեքսամեթիլենտետրամին 15
տոկոֆերոլացետատի 30 % յուղային լուծույթ 1

ֆոսֆատիդիլատիվի 96% սպիրտային լուծույթ բորած ջուր 0.001 մնացածը:

- (51)⁵ **A61K 37/02** (11) **316 A1**
 (21) 000509 (22) 23.06.92
 (31) 07/719,898 (32) 24.06.91 (33) US
 (72) Վ. Գ. Սթերեր, Ս. Մ. Քեյդի, Գ. Ֆ. Ջոնսոն, Թ. Ռայս, US
 (71) (73) Ամերիքն Ֆիսհանմիդ Քամփնի, US
 (74) Ն. Թումանյան
 (54) (57)

1. Պարենտերալ ներարկման պատվաստանյութ, որի ներարկումը վերահսկվում է, եւ որն ունի ակտիվ նյութ պարունակող միջուկ եւ պատվածք. *լարքերվում է* նրանով, որ միջուկն ունի մեկից երեք շերտ, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է 35-70% կենսաբանորեն ակտիվ պրոտեին, պեպտիդ կամ պոլիպեպտիդ, 17,6-50% ճարպայուղ կամ մոմ, կամ դրանց խառնուրդը, ոչ ավելի քան 20% շաքար, ոչ ավելի քան 5,3% բուֆեր, ոչ ավելի քան 16% լցանյութ՝ միջուկի ընդհանուր կշռի հաշվարկով:

2. Պատվաստանյութն ըստ 1-ին կետի. *լարքերվում է* նրանով, որ լրացուցիչ պարունակում է կայունարար, մակերեւութաակտիվ նյութ կամ դրանց խառնուրդը, իսկ կենսաբանորեն ակտիվ սպիտակուցը, պեպտիդը կամ պոլիպեպտիդը ընտրում են սոմատատրոպիկներից, սոմատամեդիկներից եւ աճի գործոններից, որոնք ներառում են խոզի, ոչխարի, ձիու, կովի, թռչնի եւ մարդու սոմատատրոպիկներ, ճարպայուղը ընտրում են գլիցերինի եռմիրիստատից, գլիցերինի եռպալմիտատից եւ գլիցերինի եռստեարատից, բուֆերը ընտրում են նատրիումի բորատից, նատրիումի կարբոնատից, միահիմնային նատրիումի ֆոսֆատից, երկհիմնային նատրիումի ֆոսֆատից կամ դրանց խառնուրդից, շաքարը ընտրում են գլյուկոզից, մանոզից, սախարոզից, ռաֆինոզից, սորբիտից, մանիտից եւ լակտոզից, պատվածքը կազմված է մեկ կամ երկու շերտ ունեցող կիսաթափանց նյութից:

3. Պատվաստանյութն ըստ 1-ին կետի. *լարքերվում է* նրանով, որ որպես բուֆեր կիրառում են միահիմնային նատրիումի ֆոսֆատի եւ երկհիմնային նատրիումի ֆոսֆատի խառնուրդ:

4. Պատվաստանյութն ըստ 1-ին կետի. *լարքերվում է* նրանով, որ պատվածքը պարունակում է 1-20% էթիլցիտրատ կամ տալկ պարունակող մեթակրիլային եթերի համապոլիմեր եւ ունի 1,5-2,5 մմ հաստություն:

5. Պատվաստանյութն ըստ 1-ին կետի. *լարքերվում է* նրանով, որ պատվածքի յուրաքանչյուր շերտի կենսաբանորեն ակտիվ սպիտակուցի, պեպտիդի կամ պոլիպեպտիդի բաժնաչափը ավելանում է կենտրոնից դեպի մակերեւութամաս:

6. Պատվաստանյութն ըստ 1-ին կետի. *լարքերվում է* նրանով, որ այն պարունակում է 45-65% կենսաբանորեն ակտիվ սպիտակուց, պեպտիդ կամ պոլիպեպտիդ, 17.6-50 % ճարպայուղ կամ մոմ, 2-5% բուֆեր եւ 1-15% լցանյութ՝ միջուկի ընդհանուր կշռի հաշվարկով:

7. Պատվաստանյութն ըստ 1-ին կետի. *լարքերվում է* նրանով, որ խոզի սոմատոտրոպիկնը ընտրում են E34rpST, 1122L+E34rpST եւ A6TS11R+E34rpST-ից բաղկացած խմբից:

- (51)⁵ **A61K 39/00** (11) **317 A2**
 (21) 000283 (22) 22.04.94
 (72) Լ. Մ. Յարլոչնիկ, Կ. Ա. Սարկիսով, Կ. Պ. Լետյակին, Ա. Ն. Պանին, RU
 (71) (73) Վսերոսիյսկի գոստոդարստվենի նաուչնո-իսլետդովատելսկի ինստիտուտ կոնտրոլյա, ստանդարտիզացիի ի սերտիֆիկացիի վետերինարնիս պրեպարատով (ՎԳՆԿԻ), Մոսկվա, RU
 (74) Ն. Թումանյան
 (54) (57)

Պատվաստանյութ կենդանիների տրիխոֆիտայի դեմ, որը պարունակում է *Trichophyton verrucosum* 130 Մ շտամից ստացված հակածին, սախարոզ, դոնդողանյութ եւ ջուր. *լարքերվում է* նրանով, որ այն լրացուցիչ պարունակում է *Trichophyton mentagrophytes* (ՄՀԿԻ-27) շտամից ստացված հակածին՝ բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ.%)

<i>Trichophyton verrucosum</i>	
130 Մ շտամից ստացված հակածին	300-600 մլն. միկրոկոնիդիում/սմ ³
<i>Trichophyton mentagrophytes</i> (ՄՀԿԻ-27) շտամից ստացված հակածին	300-600 մլն. միկրոկոնիդիում/սմ ³
սախարոզ	10.0-20.0
դոնդողանյութ	1.5-4.0
ջուր	մնացածը:

- (51)⁵ **A61L 15/00** (11) **318 A2**
A61L 17/00
A61L 27/00
A61K 31/00
A61K 35/26
A61K 39/018
A61F 2/08
A61F 2/10
 (21) 96306 (22) 15.11.96
 (72) Հ.Ս. Թամազյան, Ն.Ֆ. Գուսակովա, Ռ.Պ. Միրիմանովա, Մ.Գ. Հովհաննիսյան, AM
 (71) (73) ՀՀ առողջապահության նախարարության Ա.Լ.Միքայելյանի անվան վիրաբուժության

ինստիտուտ, Երևան, Հասրաթյան 9, AM (54) (57)

In vitro կուլտիվացված սաղմնային ֆիբրոբլաստներով կանացի սեռական օրգանների բորբոքային հիվանդությունների բուժման եղանակ, ըստ որի կատարում են հականեխիչ լուծույթներով ոռոգում եւ ապլիկացիա. *Կարբերվում է* նրանով, որ որպես հականեխիչ լուծույթ կիրառում են սնուցիչ միջավայրի մեկ միլիլիտրում 800 000-10 000 000 բջիջ պարունակող, մարդու 10-18 շաբաթական սաղմի մաշկամկանային հյուսվածքի ֆիբրոբլաստների կախույթ, ընդ որում ոռոգումը կատարում են օրը մեկ անգամ 2-10 օրվա ընթացքում:

(51)⁵ **B01D 13/02** (11) **319 A2**
(21) 96047 (22) 12.04.96

(76) Անուշավան Արիստակեսի Վանցյան, Երևան, Վերին Ձեյթուն, Կամարակի 2-րդ նրբ. 36, AM (54) (57)

Էլեկտրահաղորդիչ խողովակների եւ ցցերի տեղադրման եղանակ, ըստ որի տեղադրման ընթացքում տեղադրվող մարմնին եւ գետնահողին հաղորդում են էլեկտրական հոսանք. *Կարբերվում է* նրանով, որ գեներատորի ներդաշնակ ազդանշաններից մեկը, նախօրոք ուժեղացնելով, տալիս են տեղադրվող մարմինը տատանող կոճին, իսկ մյուսը, դարձնելով հակափուլ եւ ուժեղացնելով, տալիս են գետնահողին՝ ապահովելով տեղադրվող մարմնի եւ գետնահողի հակափուլ տատանում:

(51)⁵ **B05B 7/22** (11) **320 A2**
H01L 29/84

(21) 000615 (22) 13.10.95
(72) Է. Գ. Մելիքյան, AM

(71) (73) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Երևան, Տերյան 105, AM (54) (57)

Ղժվարահալ նյութից մանրագնդիկներ պատրաստելու սարք, որն ունի էլեկտրաաղեղային փոշարար, գազի շիթը եւ մշակվող նյութը էլեկտրական աղեղի տիրույթը մատուցող հանգույցներ. *Կարբերվում է* նրանով, որ այն լրացուցիչ ունի ղժվարահալ նյութի մանրահատիկները պարունակող խուց, իսկ էլեկտրոդներից մեկը՝ առանցքային անցք, ընդ որում խցի մուտքը միացված է սեղմված գազի աղբյուրին, իսկ ելքը՝ էլեկտրոդի անցքի մուտքին:

(51)⁵ **B23P 6/00** (11) **321 A2**
(21) 96056 (22) 22.04.96

(72) Է. Թ. Հակոբյան, Լ. Պ. Գյոդակյան, Ռ. Գ. Մխիթարյան, Հ. Կ. Բարսեղյան, Է. Ե. Բարսեղյան, Մ. Հ. Հունանյան, Թ. Հ. Խաչատրյան, Ա. Ա. Մալխասյան, Հ. Գ. Պեպեյան, AM

(71) (73) Գյումրիի ավտոբուսների նորոգման գործարան, ք.Գյումրի, Փանյան 1, AM (54) (57)

1. **Անվագույզերի կատարների մակահալման սարք**, որն ունի հիմք, էլեկտրոդակալ կրող մակահալման գլխիկ եւ շարժաբեր մեխանիզմ, ընդ որում մակահալման գլխիկն ու անվագույզը տեղակայված են մեկը մյուսի նկատմամբ պտտման հնարավորությամբ. *Կարբերվում է* նրանով, որ շարժաբեր մեխանիզմը հիմքի վրա տեղակայված է շառավղային տեղաշարժման հնարավորությամբ, մակահալման գլխիկն ամրակված է շարժաբեր մեխանիզմի վրա, որն ունի վերականգնվող անվիլ հպվող հոլովակ:

2. Մարքն ըստ 1-ն կետի. *Կարբերվում է* նրանով, որ էլեկտրոդակալը մակահալման գլխիկի վրա տեղակայված է անվագույզի առանցքին ուղղահայաց առանցքի շուրջը պտտման հնարավորությամբ:

(51)⁵ **B25J 11/00** (11) **322 A2**
(21) 96011 (22) 26.01.96

(76) Տիգրան Ֆելիքսի Փարիկյան, Երևան, Այգեձոր 1-ին նրբ. 22, բն. 35, AM (54) (57)

Մանիպուլյատոր, որն ունի հիմք, գործադիր օրգան եւ փոխտողահայաց տեղակայված, առանցքի նկատմամբ ոլորման բարձր կոշտություն ունեցող առնվազն երեք առաձգական շարժաբերային տարրեր, որոնցից յուրաքանչյուրը մի ծայրով կոշտ միացված է գործադիր օրգանին. *Կարբերվում է* նրանով, որ յուրաքանչյուր առաձգական շարժաբերային տարր մյուս ծայրով իրեն համառանցք պտտական շարժաբերային կինեմատիկ զույգի միջոցով միացված է հիմքին:

(51)⁵ **B28C 5/04** (11) **323 A2**
(21) 96061 (22) 06.05.96

(76) Ալֆրեդ Ապրեսի Պետրոսյան, Երևան, Գուսան Շերամի 218, բն. 36, Գրիգորի Հակոբի Գասպարյան, Երևան, Ղ. Փարպեցու 14, բն. 8, AM

(54) (57)

1. **Փոքրաչափ գրավիտացիոն խառնիչ**, որն ունի հենարանային շրջանակ, կենտրոնական լիսեռի վրա ազատ պտտման հնարավորությամբ տեղակայված թմբուկ, կարգավորման բռնալծակ, տեղաշարժման հանգույց, շարժաբեր եւ թմբուկի

առանցքի նկատմամբ համաչափորեն տեղադրված երկու հենահողովակ, որոնցից մեկը կլինեմատիկորեն կապված է շարժաբերին: *Կարբերվում է* նրանով, որ հենահողովակներն արտակենտրոն են, իսկ թմբուկի առնչին կենտրոնական լիսեռին միացված է հողակապորեն:

2. Խառնիչն ըստ 1-ին կետի. *Կարբերվում է* նրանով, որ հենարանային շրջանակի վրա ամրակված են սեկտորային ուղղորդիչներ, որոնցում տեղակայված են հենահողովակներով սահուղիներ՝ 120-170° սահմաններում հողովակների առանցքների միջև անկյան կարգավորման հնարավորությամբ:

3. Խառնիչն ըստ 1-ին կետի. *Կարբերվում է* նրանով, որ հենահողովակները տեղադրված են իրենց պտտման առանցքի նկատմամբ 180° շեղումով:

4. Խառնիչն ըստ 1-ին կետի. *Կարբերվում է* նրանով, որ երկրորդ հենահողովակը կլինեմատիկորեն կապված է շարժաբերին:

(51)⁵ **B65B 25/00** (11) **324 A2**
(21) 96093 (22) 03.06.96

(72) Ա. Մ. Արզումանյան, Ջ. Ա. Մինասյան, Ա. Յ. Ադուգումցյան, AM

(71) (73) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Գյումրիի կրթահամալիր, ք. Գյումրի, Մ.Սկրտչյանի 2, AM

(54) (57)

Երեսպատման սալերը տարայում դարսելու սարք, որն ունի սալերը մատուցող գրավիտացիոն հողովակուղի, սալերը հողովակուղուց ընդունող հարմարանք, ընդունող հարմարանքին միացված հողովակուղու տակ տեղակայված ուժային զլան եւ հորիզոնական ուղղությամբ տեղափոխման հնարավորությամբ սալերն ընդունող տարա. *Կարբերվում է* նրանով, որ սարքը լրացուցիչ ունի ընդունող հարմարանքից սալերը հանող հրիչ եւ հրիչի ու տարայի շարժաբեր ուժային զլաններ:

(51)⁵ **C02F 1/56** (11) **325 A2**
(21) 000333 (22) 06.09.94

(72) Հ. Կ. Բրոնոզյան, Կ. Ծ. Թահմազյան, Գ. Բ. Այվազյան, Կ. Ռ. Բարսեղյան, Ս. Ն. Սարգսյան, Ս. Ն. Սարգսյան, Ն. Ն. Ներսիսյան, AM

(71) (73) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Երեւան, Տերյան 105, AM

(54) (57)

Գավառական արտադրության թափոնային ջրերի մաքրման եղանակ, ըստ որի թափոնային ջրերը մշակում են պոլիմերային ֆլոկուլիչով. *Կարբերվում է* նրանով, որ որպես ֆլոկուլիչ օգտագործում են երկմեթիլերկալիլամոնիումի քլորիդի ու ալկիլամիդի համապոլիմեր:

(51)⁵ **C03B 1/00** (11) **326 A2**
(21) 000427 (22) 21.03.95

(72) Ա. Հ. Մանթաշյան, Կ. Ա. Մանթաշյան, Ս. Դ. Արսենտե, Գ. Հ. Մանուկյան, Ա. Գ. Սուքիասյան, Կ. Յ. Մեժլումյան, AM

(71) (73) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Երեւան, Տերյան 105, ՀՀ ԳԱԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտ, Երեւան, Պ. Մեսակի 5/2, AM

(54) (57)

Բարձրասիլիկահողային հումքի նախապատրաստման եղանակ, ըստ որի կատարում են տաքացում եւ ալտիվարարով մշակում. *Կարբերվում է* նրանով, որ պրոցեսն իրականացնում են 600-1200°C ջերմաստիճանում, իսկ որպես ալտիվարար օգտագործում են ածխաջրածնային գազի եւ քլորի խառնուրդ՝ գազ:քլոր = 1:(9-20) հարաբերակցությամբ:

(51)⁵ **C03C 8/24** (11) **327 A2**
(21) 000465 (22) 25.05.95

(72) Ջ. Ա. Գեոդակյան, Բ. Վ. Պետրոսյան, Ս. Գ. Ջավուկցյան, AM

(71) (73) Նյութաբանության գիտաարտադրական ձեռնարկություն, Երեւան, Չարենցի 17, AM

(54) (57)

Չողանյութային բաղադրանյութ, որը պարունակում է դյուրահալ ապակի, էվկրիպտիտային սիտալ եւ կապարի տիտանատ. *Կարբերվում է* նրանով, որ նշված բաղադրամասերը վերցված են հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ.%)

<i>դյուրահալ ապակի</i>	67-72
<i>կապարի տիտանատ</i>	21,5-27,5
<i>էվկրիպտիտային սիտալ</i>	5-6,5

եւ ունեն բաղադրամասերի մասնիկների հետեւյալ միջին չափսերը (մկմ).

<i>դյուրահալ ապակի</i>	1,8-2,5
<i>կապարի տիտանատ</i>	4 -8
<i>էվկրիպտիտային սիտալ</i>	20-30

(51)⁵ **C04B 14/00** (11) **328 A2**
C04B 28/00

(21) 000098 (22) 12.08.93

(72) Ռ. Վ. Մանուկյան, AM

(71) (73) ՀՀ ԳԱԱ ընդհանուր եւ անօրգանական քիմիայի ինստիտուտ, Երեւան, Ֆիոլետովի 2-րդ նրբ. 10, AM

(54) (57)

Ճեփ, որը կազմված է լցանյութից, սիլիկատօրգանական կապակցող նյութից եւ ջրից. *տարբերվում է նրանով*, որ որպես լուծույթ օգտագործում են բնահող, իսկ որպես կապակցող նյութ՝ պոլիէթիլիդիդրոսիլօքսան ԴԿՋ-94՝ բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ.մաս.).

<i>քնահող</i>	2,5
<i>ԴԿՋ-94</i>	0,03-0,05
<i>ջուր</i>	<i>մինչեւ Հ:Պ=1:2,5:</i>

(51)⁵ C04B 14/18 (11) 329 A2
C04B 22/06

(21) 000655 (22) 29.12.95

(72) Է. Ռ. Սահակյան, Մ. Կ. Անդրեասյան, Ս. Ն. Գետրգյան, AM

(71) (73) «Քարեր եւ սիլիկատներ» գիտաարտադրական ֆիրմա, Երեւան, Աճառյանի 40ա, AM

(54) (57)

1. Քիմիապես կայուն պատրաստվածքներ ստանալու հումքային խառնուրդ, որը պարունակում է ապակենման ալյումասիլիկատային ապար. *տարբերվում է նրանով*, որ այն լրացուցիչ պարունակում է բյուրեղային ալյումասիլիկատային ապար եւ հիմնային հավելույթ՝ բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ.%)

<i>ապակենման ալյումասիլիկատային ապար</i>	35,5-88,0
<i>բյուրեղային ալյումասիլիկատային ապար</i>	10,0-62,0
<i>հիմնային հավելույթ (վերահաշված ըստ Na₂O-ի)</i>	2,0-2,5:

2. Հումքային խառնուրդն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով*, որ որպես հիմնային հավելույթ վերցված է նատրիումի հիդրօքսիդ, հեղուկ ապակի կամ սոդա:

(51)⁵ C04B 20/06 (11) 330 A2
(21) 000102 (22) 12.08.93

(72) Ռ. Վ. Մանուկյան, Մ. Ա. Ապրեսյան, AM

(71) (73) ՀՀ ԳԱԱ ընդհանուր եւ անօրգանական քիմիայի ինստիտուտ, Երեւան, Ֆիոլետովի 2-րդ նրբ. 10, AM

(54) (57)

Փքած պեռլիտի մշակման եղանակ, ըստ որի կատարում են չափաքաշխում, հղկում հեղուկ մի-

ջավայրում, ջրագերծում եւ չորացում. *տարբերվում է նրանով*, որ հղկումը կատարում են LiCl.H₂O, KCl կամ CaCl₂ 1-3 տոկոսանոց լուծույթում, իսկ չորացումը՝ 600-750°C ջերմաստիճանում:

(51)⁵ C04B 35/02 (11) 331 A2
C04B 35/14

(21) 000150 (22) 22.10.93

(76) Խաժակ Ամասիի Մանուկյան, Երեւան, Եղբայրության 14, բն. 42, AM

(54) (57)

Էլեկտրատաքացուցիչների ջերմակայուն զանգված, որը պարունակում է բյուրեղային քվարցիտ ու պորտլանդցեմենտ. *տարբերվում է նրանով*, որ նշված բաղադրամասերը վերցվում են հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ. %).

<i>բյուրեղային քվարցիտ</i>	60-75
<i>պորտլանդցեմենտ</i>	25-40

(51)⁵ C04B 41/28 (11) 332 A2
(21) 000407 (22) 07.02.95

(72) Ա. Գ. Սուրիսյան, Է. Ս. Ոսկանյան, Ա. Հ. Սողոմոնյան, Ն. Վ. Մեսրոպյան, Ա. Ս. Դանիելյան, Ջ. Ա. Հակոբովա, AM

(71) (73) «Նաիրիտ» գիտաարտադրական ձեռնարկություն, Երեւան, Բագրատունյաց 70, AM

(54) (57)

Ջերմամեկուսիչ պատրաստվածքների մշակման եղանակ, ըստ որի դրանց մակերեսային պատում են թաղանթագոյացնող նյութի լուծույթով եւ այն պնդացնում. *տարբերվում է նրանով*, որ որպես թաղանթագոյացնող նյութ օգտագործում են լատեքսի 5-15%- անոց լուծույթը:

(51)⁵ C04B 41/46 (11) 333 A2
(21) 000135 (22) 04.10.93

(72) Ռ. Վ. Մանուկյան, AM

(71) (73) ՀՀ ԳԱԱ ընդհանուր եւ անօրգանական քիմիայի ինստիտուտ, Երեւան, Ֆիոլետովի 2-րդ նրբ. 10, AM

(54) (57)

Քարե երեսպատվածքների մակերեսային մշակման եղանակ, ըստ որի մշակումը կատարում են սիլիկատօրգանական հեղուկի լուծույթով. *տարբերվում է նրանով*, որ մշակումը կատարում են 0,5-5 տոկոսանոց խտությամբ լուծույթով 0,5-1 մքն. ալելցուկային ճնշման տակ:

- (51)⁵ C07C 59/255 (11) 334 A2
- (21) 000147 (22) 13.10.93
- (72) Վ. Ա. Բաղալյան, Ռ. Ս. Մարտիրոսյան, Ա. Ա. Փաշայան, Ժ. Լ. Բագրատունի, Մ. Մ. Ստեփանյան, AM
- (71) (73) Երեւանի քիմիական ռեակտիվների գործարան, Երեւան, Արցախի 4-րդ նրբ. 5, AM
- (54) (57)

1. Կալինատրիումտարտրատի քառահիդրատի ստացման եղանակ, ըստ որի ելանյութը մշակում են կալիումի ու նատրիումի հիդրօքսիդներով. *փարբերվում է* նրանով, որ որպես ելանյութ վերցնում են զինեթթվական հումք, որին լրացուցիչ ավելացնում են “Трилон Б” եւ թթու մինչեւ pH 4 - 5,5, իսկ ստացված կալիումհիդրոտարտրատի լուծույթին ավելացնում են նատրիումի հիդրօքսիդ մինչեւ pH 8:

2. Եղանակն ըստ 1-ին կետի. *փարբերվում է* նրանով, որ որպես ելանյութ վերցնում են զինեթարը, իսկ որպես թթու՝ քացախաթթուն:

- (51)⁵ C07C 67/30 (11) 335 A2
- C07C 67/307
- (21) 000069 (22) 07.07.93
- (72) Վ. Վ. Դովլաթյան, Կ. Ա. Էլիագյան, Թ. Օ. Չաքրյան, AM
- (71) (73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երեւան, Տերյան 74, AM
- (54) (57)

